ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Պրոֆ. Արարատ Ղարիբյանի առաջարկած մեկնաբանությամբ՝ ուրեմն Զանգեզուրի բնակչությունը խառնուրդ է երկու ազգագրական տարրերի։ Որո՞նք են այդ տարրերը, ո՞րն է հնագույնը, ինչպե՞ս է երևան եկել երկրորդ տարրը և որտեղի՞ց է ներս թափանցել։ Շեշտելի է այստեղ այն, որ Ստեփաննոս Օրբելյանը միշտ իրարից առանձնացնում է տեղական իշխանական դասի մեջ Սիսակից և Հայկից ծագած տները և չի համարում, հակառակ Խորենացուն, Սիսակին Հայկի տոհմից՝ Գեղամից առաջացած։ Արդյո՞ք հիմք կա այսպիսի հակադրության համար։

Ի՞նչ էթնիկ խմբին էին պատկանում հնագույն բնակիչները։ Անշուշտ նրա մարդաբանական առանձնահատկությունները պիտի պահպանված լինեն և ներկա բնակչության մեջ։ Ինչ նոր տարրեր էլ ներթափանցած լինեն ավելի ուշ, երբեք չի կարելի այն կարծիքը պաշտպանել, իբր թե նորեկները իսպառ ոչընչացրել են նախկին բնակչությանը կամ բոլորովին դուրս են մղել նրան նրա բուն հայրենիքից։ Զանգեզուրում էլ տեղի պիտի ունեցած լինի տեղացիների և եկվորների օրգանիկ միաձուլման պրոցեսը։ Սովորաբար այդպիսի միախառնման միջոցին ավելի ուժեղ են հանդես գալիս տեղական շերտին պատկանող հատկանիշները, որպես տեղական աշխարհագրական պայմաններին դարերի ընթացքում ավելի հարմարվածներ։ Կատարված պեղումների ժամանակ անհրաժեշտ զգուշությամբ չեն հանվել քարե և բրոնզե դարերի և ավելի ուշ ժամանակաշրջանների կմախքներն ու մասնավորապես գանգերը և մինչև այժմ բնականաբար անհնարին է եղել նրանց մարդաչափական հետազոտության ենթարկել և ապա համեմատել կենդանի մարդկանց վրայից վերցրած մարդաչափական տվյալների հետ։

Զանգեզուրում առաջին մարդաչափական աշխատանքները կատարել է Մերձավոր արևելքի ժողովուրդների մարդաբանական տիպերի հետազոտությամբ առանձնապես պարապած ֆրանսիացի գիտնական Էրնեստ Շանտրը, որը իր կնոջ ուղեկցությամբ 1890 թվի մայիսի վերջերին և հունիսի սկզբներին այցելել է Զանգեզուր և այդտեղ չափումներ կատարել։ Սակայն առհասարակ հայաբնակ գավառներում նրա չափագրած 249 (39 կին և 210 այր մարդ) անհատներից ո՞րքանն են Զանգեզուրի երեք գավառակներում ապրողները, ի՞նչ միջին ցուցանիշներ է նա հանել նրանց նկատմամբ, արդյո՞ք տարբերություններ կան Սիսիանի, Զանգեզուրի, Գորիսի և Կապանի հնուց տեղացի